«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Մեթոդիստ՝ Քրիստինե Դանիելյան

Մանկապարտեզ՝ «Պառավաքարի Կարեն Մարգարյանի անվան» ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ.....5

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ.....10

ԴԻՏԱՐԿՈՒՄ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խելքը ոչ միայն գիտելիքն է, այլև այդ

գիտելիքը ճիշտ օգտագործելու ունակությունը:

Արիստոտել

Թեմայի արդիականությունը: ժամանակակից մանկավարժությունը մարդու մասին գիտությունների համակարգի մի մասն է կազմում, որն ուսումնասիրում է մարդու զարգացումը նրա գործունեության, հարաբերությունների, սոցիալական կապերի համակարգը, ներաշխարհն ու տարիքային հոգեբանությունը: ՄԱՐԴԸ զարգանում և փոփոխվում է ողջ կյանքի ընթացքում, այսինքն նա շարունակական մանկավարժական օգնության կարիք է զգում ողջ կյանքի ընթացքում: Մանկավարժությունը և՛ տեսական , և՛ գործնական գիտություն է: Այն չի առաջարկում դեղատոմսեր, միանշանակ պատասխաններ: Սակայն առաջարկում է դրույթներ և ստեղծագործական որոնողական աշխատանքի սխեմաներ, որոնք թույլ են տալիս իրականացնել երեխայի դաստիարակությունը, ձևավորել նրա անձնային որակները, զարգացնել հմտություններ և կրթությունը դարձնել ըստ կարողունակությունների, որպեսզի մարդը իր սաղմնային ձևավորումից սկսած ստացած տեղեկությունները պահեստավորի և կիրառի արտաքին աշխարհում իր պատշաճ «գոյատևման» համար: Ժամանակակից մարդու առջև դրված են մի շարք պահանջներ և մարդը որպեսզի կարողանա հաղթահահարել աշխարհում ապրելու, արարելու խրթին գործընթացը պետք է ՆՈՒՀ-ից սկսած կրթությունն այնպես կազմակերպել, որ երեխան իր ստացած ակադեմիական գիտելիքները կիրառի գործնականում: Այստեղ տեղին է նշել, որ մեր պետությունը մանկավարժներից ակնկալում է ապահովել հենց այդպիսի կրթություն , քանի որ մանկավարժությունը գիտություն է և արվեստ, գիտելիքի, վարպետության, մարդկանց ճանաչելու ձգտման և կարողության սինթեզ: Հետևաբար մշակութային վայրերը այցելելը սեփական պատմությունը ճանաչելու և գոյության պայքարում դժվարությունները հաղթահարելու և մնայունն արարելու կարողունակության հիմքն է: Լ. Ասատրյանի, Գ. Հակոբյանի «Մանկավարժություն» համատեղ ձեռնարկում, որը ներկայացնում է մանկավարժության տեսական-մեթոդաբանական հիմքերը, մանկավարժական գործընթացի կազմակերպման օրինաչափությունները,

կանոնները, սկզբունքները, մեթոդները, համառոտ խոսվում է նաև էքսկուրսիաների մասին՝ որպես ուսուցման կազմակերպման ուշագրավ ձև[1]: Լ. Սմբատյանի, Լ. Վերդյանի, Հ. Մինասյանի Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագրում նույնպես խոսվում է էքսկուրսիաների դերի մասին[2]: Աշխատանքը կատարելիս օգտվել ենք ինչպես այդ գրքերից, այնպես էլ՝ համացանցային աղբյուրներից:

Իմ հետազոտական աշխատանքը սկսելուց առաջ, երբ մտածում էի, թե որ թեման ընտրեմ, որն է արդիական և համապատասխան ժամանակի պահանջներին, որ նպատակը, խնդիրներն ու վարկածները կարող են մի շարք հույժ կարևոր հարցերի պատասխանել, նոր տեսակետ, նոր գաղափար և նոր մոդուլներ մշակել և տրամաբանական լուծումներ առաջարկել ուսուցման գործընթացում , որպեսզի մեր սաների ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ավելի կիրառելի դառնան իրականության մեջ, ինձ ոգեշնչեց մեծ փիլիսոփա և մանկավարժ Արիստոտելի աֆորիզմը: Այսպիսով՝ մեր աշխատանքի թեման **արդիական** է բոլոր ժամանակների համար:

Այս աշխատության **նպատակն** է դիտարկել էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների ճանաչողական և կրթական զարգացման գործում:

Թեմայի նպատակից բխող **խնդիրներն** են.

- վերլուծել մանկավարժների և հետազոտողների տեսակետներն ու համոզմունքները ,
- ինդուկտիվ ու դեդուկտիվ եզրահանգումների արդյունքում առաջարկել այլընտրանքային և ինտերակտիվ վարկածներ և լուծումներ:
- կատարել մասնագիտական գրականության վերլուծություն:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական գլխից, որի հիման վրա կատարել ենք եզրակացություններ, ապա աշխատանքին կցել ենք օգտագործված գրականության ցանկը: Աշխատանքը բաղկացած է 18 համակարգչային էջից:

[1] Լ.Ասատրյան, Գ. Հակոբյան, Մանկավարժություն, Երևան, 2017, էջ 219-221:

[2] Լ. Սմբատյան, Լ. Վերդյան, Հ. Մինասյան, Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր. Ծրագիր, Երևան, 2011, էջ 14:

ԳԼՈՒԽ 1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅՑԵՐԻ ԴԵՐԸ ՍԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Լավ կազմակերպված և անցկացված էքսկուրսիան հավասար է հաջողված դասին:

Էքսկուրսիան կրթական կամ ժամանցային նպատակով կազմակերպված կոլեկտիվ ուղևորություն, զբոսանք, շրջագայություն է դեպի բնություն, արդյունաբերական կամ կրթական կառուցներ, տեսարժան վայրեր:

Էքսկուրսիայի էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համադրության մեջ: Եթե այդ համադրությունից բացակայի ցուցադրումը, ապա այն կվերածվի պարզապես զրույցի: Իսկ եթե էքսկուրսիան զուրկ լինի բացատրությունից, ապա ցուցադրումն էլ իր հերթին կվերածվի ուղղակի տեսարժան վայրի այցելության:

Էքսկուրսիա բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն կամ կուլտուր-լուսավորչական նպատակ: Ռուսերենում այն ի սկզբանե նշանակում էր «փախչել, ռազմական արշավանք կատարել»:

Ի դեպ, գուցե հենց դա է պատճառը, որ էքսկուրսիա գնացողների որոշ խմբեր իսկապես զավթիչների ջոկատներ են հիշեցնում: Ընդհանրապես էքսկուրսիայի մեթոդաբանությունը մշակվել է 20-րդ դարի սկզբին ռուս ուսուցիչների և մեթոդիստների կողմից, որոնցում ներառված են մանկավարժական գիտության հայտնի ներկայացուցիչներ Կայգորոդով, Զվյագինցև, Արժանով, Անցիֆերով, Տարասով, Ռայկով:

1910 թվականից աշխարհագրական էքսկուրսիայի դասերը դարձել են ուսումնական գործընթացի պարտադիր բաղադրիչ: Ուսուցիչները իրենց դիտարկումներն ու եզրակացությունները հրապարակել են «Դպրոցական էքսկուրսիաներ և դպրոցական թանգարան», «Ռուս էքսկուրսիոնիստ», «Էքսկուրսիա տեղեկագիր» ամսագրերում:

Մեթոդաբանությունը շարունակաբար կատարելագործվում և ճշգրտվում էր՝ պահպանելով իր հիմնական սկզբունքը, որը ռուս ուսուցիչներն անվանում էին «ճանապարհորդություն»[3]:

Վերջերս լայնորեն տարածվել է 14-րդ դարի սկզբին ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզ մոտ, որը կիրառվում է ինչպես նախադպրոցական ուսումնական հաստատություններում, այնպես էլ հանրակրթական մնացած հաստատություններում, պարզապես ՆՈՒՀ-երում էքսկուրսիաները և մշակութային վայրեր այցերը ցանկալի է՝ լինեն ավելի մոտ: Էքսկուրսիան ճանաչողական դաստիարակության ճյուղերից մեկն է, որի նպատակը սաների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը:

Հետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացում գիտելիքի հաղորդումը ցանկալի է պարբերաբար կատարել էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով, որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ գիտելիքի փոխանցումը ավելի աշխույժ, հետաքրքիր է դառնում:Այն, ինչը տեսնում է սանը, տպավորվում է նրա գիտակցության մեջ մեթոդիստի պատմածի, բացատրածի որոշակի իրադրությունների, երևույթների, փաստերի, շնորհիվ: Մեթոդիստը ցուցադրելով միաժամանակ սովորեցնում է ճիշտ ընկալել տեսածը: Այսպիսով՝ էքսկուրսիաները օգնում են նախադպրոցական տարիքի սաներին պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին հենց լսածը տեսնելու, վերացականը ակնառու-պատկերավորի փոխարինելու որոշակի իրադարձությանը մասնակից լինելու միջոցով:

Ուսումնական էքսկուրսիան կարելի է դիտարկել որպես հաջորդական և փոխկապակցված գործողությունների համակարգ

- դիտարկում,
- օբյեկտների ուսումնասիրություն,
- գիտելիքների համախմբում[4]:

---

[3] Կոնդրաշովա Մ.Ա. Նախադպրոցականների էկոլոգիական կրթությունը պարապմունքներին և առօրյա կյանքում, Մեթոդական ուղեցոույց, 1991:

[4] Կամենևա Լ.Ա. Մանկապարտեզում երեխաներին բնությանը ծանոթացնելու մեթոդները, Մ., 1995:

Էքսկուրսիաները կարող են լինել ներածական, անցկացվում են նախքան նյութի ուսումնասիրությունը սկսելը, և վերջնական, որոնք կազմակերպվում են թեման ուսումնասիրելուց հետո՝ ձեռք բերված գիտելիքները համախմբելու նպատակով: Դասի ընթացքում սովորողները լսում են մեթոդիստին և կատարում անհրաժեշտ գործողություններ, որոնք օգնում են նրանց ավելի լավ յուրացնել և ընկալել ուսումնական նյութը:

Քայլարշավային էքսկուրսիաները ներառում են բաց տարածքում մեկ կամ մի քանի առարկաների ուսումնասիրություն:

Էքսկուրսիոն պարապմունքների անցկացման երկրորդ տարբերակը թեմատիկ օբյեկտ այցելելն է՝ թանգարան, ցուցահանդես, այգի, գիտական կենտրոն, ձեռնարկություն, գյուղատնտեսական ֆերմա և այլն, և լսել մասնագետ-մեթոդիստի պատմությունը:

Երրորդ տարբերակը այցելելն է այն օբյեկտները, որտեղ անցկացվում են գործնական պարապմունքներ՝ վարպետության դասեր[5]:

Էքսկուրսիա այցելելուց հետո նյութի համախմբումն իրականացվում է հաջորդ օրը: Սաներին խնդրում են նկարագրել իրենց տպավորությունները, համակարգել ստացած գիտելիքները և եզրակացություններ անել: Մանկապարտեզներում երեխաները նկարում և վերապատմում են նյութը, պատասխանում մեթոդիստի հարցերին: Էքսկուրսիաները միշտ նպաստում են ստեղծագործական կարողությունների զարգացմանը. ոմանք լավ են մտքերը թղթի վրա արտահայտելու մեջ, մյուսները գեղեցիկ նկարում են կամ արտահայտիչ կերպով պատմում:

Էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերված գիտելիքները դառնում են առարկայի հետագա ուսումնասիրության մեկնարկային կետ: Որքան հաճախ երեխաները այցելում են մշակութային և պատմական վայրեր, այնքան ավելի լայն են նրանց գիտելիքները շրջապատող բազմազան, բարդ աշխարհի մասին, ինչը եզակի հնարավորություններ է ընձեռում իրացնելու դրանք:

Կարևոր է նաև ճիշտ ընտրված ուղին դեպի դիտարկման օբյեկտ. այն չպետք է հոգնեցուցիչ լինի և սաներին շեղի ծրագրված նպատակից: Ընտրված ուղին պետք է

[5] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014:

լինի 2-5 կմ (կախված սաների տարիքային խմբից և ֆիզիկական հնարավորություններից)։ Դեպի ընտրված վայր (միակողմանի) ճանապարհորդության տևողությունը միջին խմբում չպետք է գերազանցի 30 րոպե, ավագ խմբում՝ 40-50 րոպեն։ Իհարկե, պետք է հաշվի առնել եղանակային պայմանները և ճանապարհի առանձնահատկությունները։

Մեթոդիստը ուշադրություն է դարձնում նաև սաների հագուստին, դրանք պետք է համապատասխանեն տարվա եղանակին և վայրին։

Էքսկուրսիային մասնակցող երեխաների թիվը կրկին կախված է նրանց տարիքից, որքան փոքր են երեխաները, այնքան փոքր պետք է լինի նրանց թիմը։ Այսպիսով, կրտսեր նախադպրոցական մակարդակում նպատակահարմար է իրականացնել գործողություններ 6- 12 հոգուց բաղկացած ենթախմբի հետ։

Եթե էքսկուրսիան ենթադրում է տրանսպորտով ճանապարհորդություն, ապա դաստիարակը, մեթոդիստը և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարությունը պետք է նախապես պատրաստեն համապատասխան փաստաթղթերը (պատվեր, անվտանգության ճեպազրույց, նախադպրոցականների ցուցակ և այլն), իսկ եթե որևէ արտադրամաս կազմակերպություն կամ հաստատություն են այցելելու, ապա պետք է համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերեն, զեկուցեն և ստանան թույլտվություն։

Ճանաչել նշանակում է վերափոխել, հասկանալ այդ վերափոխման գործընթացը և, որպես հետևանք, հասկանալ, թե ինչպես է այն կառուցված։ Էքսկուրսիան որպես մեթոդ կիրառվում է ուսուցման ձևի կազմակերպման մի փուլ, որից հետո կամ առաջ կարող են կիրառվել նաև այլ մեթոդներ։ Էքսկուրսիայի՝ որպես մեթոդի հիմնական ֆունկցիան ուսումնասիրվող օբյեկտը բնական վիճակում ընկալելն է։

Էքսկուրսիաներն իրենց ծրագրային օրակարգով տարբեր են, դա կապված է, թե ինչպիսի կոլեկտիվ է գնում էքսկուրսիա և որ տարիքային խմբին են պատկանում։ Էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում, ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողությունները։Նա կարողանում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և այդ գիտելիքները ճիշտ կիրառել։ Էքսկուրսիան նպաստում է երեխայի

հետազոտաստեղծագործական կարողությունների ձևավորմանը և ամրակայում է նրա բազմաբնույթ մտածողությունը, որոնք ի հայտ են գալիս ծննդյան պահից:

Բազմաբնույթ մտածողությունների հեղինակ, մանկավարժ հոգեբան Հովարդ Գարդները մարդու մասին առավել տեղեկություններ ստանալու ճանապարհը գտավ մտածողության իր մշակած 7 չափանիշների մեջ: Դա նշանակում է, որ մարդը գիտելիքներ է ձեռք բերում ողջ կյանքի ընթացքում, սակայն մտածո-ղության այս կամ այն տեսակով օժտված է լինում ի ծնե: Եվ հենց մտածելու կերպով և ստացած տեղեկատվությունը ընկալելու, ըմբռնելու ձևով էլ մարդիկ տարբերվում են իրարից: Հովարդ Գարդների առանձնացրած մտածողություններից առաջին երկուսը /խոսքային, տրամաբանական/ հատուկ են ավանդական դպրոցին: Հաջորդ երեքը առնչվում են հիմնականում արվեստի հետ /տեսողական, երաժշտական, մարմնա-շարժողական/: Իսկ վերջին երկուսը անվանում է խիստ անձնային մտածողութ-յուն /միջանձնային, ներանձնային/: Բոլոր 7 մտածողությունները խիստ անհրաժեշտ են էքսկուրսիա կազմակերպելու ընթացքում: Էքսկուրսիաներն իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գործընթացն արդյու- նավետ կազմակերպելու մեջ:Այն կիրառվում է տարրական դպրոցից՝ առաջին դասարանից: Յուրաքանչյուր տարիքային խմբում այն ձևավորվում է յուրովի՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից:

Այսօր Հայաստանի թանգարանների մեծ մասը ներկայանում է բազմապիսի կրթական ծրագրերով՝ նախատեսված նաև նախադպրոցական տարիքի երեխաների համար: Հետաքրքիր ինտերակտիվ-էքսկուրսիաների, տարբեր թեմաներով կրթական ծրագրերի միջոցով թանգարանները այս հասակի երեխաներին մոտեցնում են արվեստին:

Դեպի մշակութային վայրեր այցելությունների շրջանակում կարելի է ներառել այցը մանկական ցուցահանդեսներ, որտեղ երեխաները կտեսնեն իրենց հասակակիցների վրձնած նկարները, ձեռքի աշխատանքները, քանդակները, պատկերացում կկազմեն նկարչության ժամերի մասին:

Մի շարք թանգարաններում ու գրադարաններում (Իջևանի կենտրոնական գրադարան) ամռան ամիսներին գործում են «Ամառային դպրոցներ»՝ փոքրիկ այցելուներին առաջարկելով հետաքրքիր նախագծեր:

Հ. Թումանյանի տուն-թանգարանում, Տիկնիկային և Խամաճիկների թատրոններում ևս նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված հետաքրքիր ծրագրեր, ներկայացումներ կան:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

«Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում» թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունից ու վերլուծությունից հետո պետք է իրականացնել աշխատանքի հետազոտական բաղադրիչը, որը իրենից ներկայացնում է 2 պարապմունք, որի հիման վրա կազմել ենք պարապմունքի պլան՝ «Հեքիաթների աշխարհում» խորագրով:

Հետազոտության ժամանակ աշխատանքը իրականցվել է համալիր ծրագրով՝ զրույց և համապատասխան զննական ու դիդակտիկ նյութերով հագեցած:

Պարապմունքները ուսումնասիրվել և արձանագրվել են հաստատության մեթոդիստի կողմից, կատարվել են դիտարկման շրջանակում առաջարկություններ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

1. **Միջավայր**-խմբասենյակ, Լոռի-Թումանյանի տուն-թանգարան

Խումբ- ավագ

Պարապմունքի տեսակը- էքսկուրսիա, զրույց

Ժամաքանակը-2

Թեմա-Հեքիաթների աշխարհում

Նպատակը-

- Ծանոթացնել և իրազեկել թումանյանական հեքիաթներից մի քանիսին:
- Կատարել ճանաչողական այց և զարգացնել ճանաչողական -մոտիվացիոն կարողունակությունը,
- Երեխաներին դարձնել մշակութային առօրյայի մաս:

Խնդիրները- զարգացնել երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը, մտքերի փոխանակումը, խթանել ազատ խոսքի հնարավորությունը, արտահայտել շատ մտքեր տեսածը վերարտադրելու:

Ուսումնական նյութեր- Թումանյանի հեքիաթների գիրքը, համակարգիչ, Թումանյանի դիմաքանդակ-մանրակերտը՝ պատրաստված մեր կողմից, պաստառ

Մեթոդներ-Մտածի՛ր-արտահայտվի՛ր, Մենք հեքիաթի հերոսներ ենք, զրույց

Իրականացրել ենք այց Թումանյանի տուն-թանգարան դեպի Լոռի: Ծրագրային բազմաբնույթ միջոցառումների շնորհիվ աշակերտների գիտակցության մեջ ձևավորվում է հարգանք մեր ազգի պատմության, հերոսների, գիր ու գրականության, գրողների հանդեպ:

Կարևորում ենք նրանց այցը դեպի Լոռի, քանզի հիշողության մեջ տեղ կմնան առաջին տպավորությունները հայ մեծանուն լոռեցուց, որոնք կուղղորդեն նրանց ամբողջ կյանքում: Մինչ այց կատարելը ժամանակի ընթացքում սաների համար կարդալ և քննարկել թումանյանական հեքիաթներ, հաճախակի դիտել դրանց հիման վրա եղած մուլտֆիլմերը, իրականացնել բեմականացումներ:

Տուն -թանգարանում նրանք իրենց հարգանքի տուրքն են մատուցում Թումանյանին՝ ծաղիկներ դնելով հուշարձանի մոտ, այդ պահից ի վեր յուրաքանչյուր սանի մոտ բարձրանում է հայրենասիրության և հպարտության զգացումը: Դիտում են տուն-թանգարանի բակում տեղադրված հեքիաթների փայտե հերոսներին, նկարվել նրանց հետ, վերհիշել հեքիաթները:

Կարևորում ենք ծնողների ներկայությունը, ինչն ազդում է աշակերտների վաքագծի դրսևորմանը: Ծնողական կոլեկտիվի ամուր կառուցմանը նպաստում է ուսուցչի կողմից նախապես ծրագրած փոքրիկ միջոցառումները: Կատարվող աշխատանքներն իրենց դրական ազդեցություններ են ունենում երեխաների ինքնահաստատման գործում: Միջին և ավագ խմբերում առավել ընդլայնված են միջոցառումներն ու էքսկուրսիաները: Այս տարիքում աշակերտները քիչ թե շատ ինքնուրույն են, կարողանում են ավելի լավ կապակցել միտքը: Այստեղ դաս-էքսկուրսիաիան նպաստում է մարդկային շփմանն ու դրական հարաբերություններին:Մեր տարածաշրջանում կազմակերպվող էքսկուրսիաները ևս նպատակային են և ունեն

իրենց նպատակահարմար տեղանքները, սակայն դեպի Լոռի էքսկուրսիան ունի նաև ճանաչողական և գիտելիքները ամրակայող նշանակություն:

Էքսկուրսիային մասնակցել են նաև մանկապարտեզի մեթոդիստը և երկու դաստիարակները:

2. **Միջավայր**-խմբասենյակ

Խումբ- ավագ

Պարապմունքի տեսակը-զրույց-քննարկում

Թեմա- Հեքիաթների աշխարհում

Վերջնարդյունքներ-ճանաչողական այցի միջոցով ամրապնդել տեսական գիտելիքներ Թումանյանի և հեքիաթների մասին: Նախադպրոցականների այցը մշակութային այս վայր կարևոր էր այնքանով,որ այն երեխաների մոտ առաջացրեց ուրախ, լուսավոր, տոնական զգացում:

Կապը ՆԿՊՉ/ Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ/-ով սահմանված վերջնարդյունքների հետ՝

- Խոսքի և հաղորդակցության ոլորտում—
  - բ. մտքերն արտահայտում է տրամաբանական հաջորդականությամբ՝ կիրառելով հոմանիշ, հականիշ բառեր,
  - ե. ճանաչում է աշխարհը փորձարկումների, ինքնուրույն գործողությունների միջոցով, խմբավորում առարկաները, պատկերներն ըստ ընդհանուր հատկանիշների,
  - ը. դրսևորում է հետաքրքրություն գրավոր խոսքի և ընթերցանության նկատմամբ,
  - ժ. հարցեր է տալիս մեդիայում լսած բովանդակության մասին, քննարկում է դրա նպատակը:
- Իմացական ոլորտում—
  - դ. մոդելավորում է առարկաները, հեքիաթի հերոսներին, բնության երևույթները:

Կարողունակություններ՝

- Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,

- Լեզվական և հաղորդակցական կարողունակություն
- Մշակութային կարողունակություն

Ընթացքը

Խթանում- Առավոտյան, հենց երեխաները հավաքվում են, տրվում է հրահանգ կանգնելու և ուշադիր լսելու «Անբան Հուռին» հեքիաթից Հուռիի երգը: Սաներին անպայման հարցնել, թե որ հեքիաթն է, ով է հերոսուհին:

Հարց- Երեխանե՛ր, դուք սիրու՞մ եք հեքիաթներ:

Լսել կարծիքներ:

Իմաստի ընկալում- Երեխաները նստում են կիսաշրջանաձև, իսկ նրանց դիմաց՝ գրատախտակին կամ այլ հարմար տեղ տեղադրել մեր կողմից նախապես պատրաստված պաստառը՝ իրենց էքսկուրսիայի նկարներով, և սեղանին դնել Թումանյանի մանրակերտ-քանդակը, փորձել հետադարձ կապի միջոցով հասկանալ սաների նախագիտելիքների մակարդակը:

Ներկայացնել պաստառը:

Հարց-Ճանաչու՞մ եք նկարների երեխաներին:

Այստեղ անպայման կարելի է տեսնել խանդավառված սաներին, որոնք ճանաչում են նկարներում իրենց և իրենց ընկերներին:

Հարց-Ո՞վ է այս քանդակում:

Պատասխաններ լսելուց հետո պարզաբանել:

Ներկայացնել և վերհիշել անցած օրը:

Հարց- Կողքի նստածի հետ զույգ կազմել, ընտրել՝ ով որ հերոսն է:

Հեքիաթի շուրջ գիտելիքներն ամփոփելու համար՝ սաներին տալ ամփոփիչ հարցեր.

- Ինչպե՞ս էր կոչվում մեր լսած հեքիաթը:
- Ինչպե՞ս էր սկսվում հեքիաթը:

Լսել կարծիքներ:

Կշռադատում

Ապա կազմել խմբեր՝ 5-6 հոգանոց, սեղանին խառը դնել տարբեր նկարներ, որոնց մեջ անպայման լինեն Թումանյանի հեքիաթների հերոսները, տուն-թանգարանի հետ կապված այլ նկարներ: Յուրաքանչյուր խումբ ընտրում է իրենց քանակով նկարներ, և ներկայացնում են՝ ով է կամ ինչ է: Մեթոդիստը կտա խթանիչ հարցեր:

Օրվա երկրորդ կեսին բոլորը միասին կդիտեն «Սոտլիկ որսկանը» մուլտֆիլմը /https://youtube.com/watch?v=iUvq0pDfoPg&feature=shares /:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Դիտարկումը կատարվել դաստիարակների, տնօրենի կողմից և արձանագրվել: Ստորև կներկայացնենք թեմայի շրջանակում կատարված դիտարկման արդյունքները՝ ըստ հաստատության տնօրենի գնահատման.

- Այս երկու պարապմունքները կարողացան որոշակի իմացություն տալ սաների գիտելիքների, ուշադրության, պատրաստվածության և մանկավարժ-մեթոդիստ-ծնող-կրթարանի սան քառամիասնության կարևորության և արժևորման մասին,
- Թեման հետաքրքիր էր, երեխաների ակտիվությունը՝ վարակիչ, սաների ոգևորությունը և հիացմունքը՝ ոգևորող,
- Պարապմունքին ներառված զննական-դիդակտիկ, ինչպես նաև ուսումնական նյութերը համապատասխանում էին թեմային,
- Մեթոդիստը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին, որի շնորհիվ սաների մոտ արմատավորվեց ճանաչողական հմտությունների զարգացումը:
- Երեխաները իրենց զգում էին արժևորված ու կարևորված, քանի որ բոլորը մասնակցում էին, բոլորին լսում էին:
- Էքսկուրսիայի ընթացքում՝ տեսանելի են յուրաքանչյուր սանի և ամբողջ մանկական թիմի առանձնահատկությունները: Հենց էքսկուրսիայի ժամանակ, երբ երեխաները չեն գտնվում իրենց սովորական միջավայրում, կարելի է նկատել նաև մեթոդիստի մասնագիտական գործունեության թերությունները, գնահատել՝ մանկավարժական վարպետությունը:

Էքսկուրսիային մասնակից դաստիարակի դիտարկումը.

Այս էքսկուրսիայի քննարկում-դիտարկումներից հասկանալի էր, որ այցը նպատակային էր, որ այն տվեց երեխաներին պարզ գիտելիքներ արվեստի, գրականության վերաբերյալ: Դիտարկում կատարողները, երեխաների պատասխաններից եզրակացրին, որ նրանց դուր են եկել նկարները, գույները, հետաքրքրություն է առաջացել նրանց մոտ՝ դեպի արվեստը, էքսկուրսիան նպաստեց սաների նկարչական կարողությունների զարգացմանը: Այն երեխաները, որոնք

սկզբում անտարբերություն էին ցուցաբերում, այդքան էլ ուշադիր չէին, ընթացքում ակտիվացան և սկսեցին հարցերին պատասխանել: Մեթոդիստը այցի ընթացքում սաներին ներկայացրեց հեքիաթներից հայտնի առկա հերոսներին, նույնիսկ միասին պատմեցին Թումանյանի «Ծիտը», արտասանեցին Թումանյանի բանաստեղծություններից: Մեթոդիստի կողմից կատարված աշխատանքը խմբի սաների, ինչպես նաև մասնակից ծնողների և աշխատողների համար կլինի անմոռանալի: Կարելի է վստահ ասել, որ մեթոդիստը ապահովեց նախապես իր առջև դրած նպատակի կատարողականությունը՝ ապահովելով կապը չափորոշչային վերջնադյունքների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ուսումնասիրեցինք «Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում» թեման, որի արդյունքում կատարեցինք մի շարք եզրակացություններ.

- Էքսկուրսիան համարվում է ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձև, աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց:
- Քննարկվող թեման հետաքրքիր է և արդիական: Էքսկուրսիան ուսուցման կազմակերպման ձև է, որը հնարավորություն է ընձեռում բնական պայմաններում կատարել տարբեր առարկաների, երևույթների և գործընթացների ուսումնասիրություններ, դիտարկումներ: Չափորոշչային նորմերով ամրագրված գիտելիքների մի մասը կարելի է ստանալ էքսկուրսիաների միջոցով: Այս ձևով յուրացումը ավելի կայուն և խորն է լինում: Էքսկուրսիաները կատարում են այն նույն գործառույթները, ինչ-որ դասերը՝ ուսուցանող, դաստիարակող և զարգացնող:
- ճիշտ կազմակերպված էքսկուրսիաները մեծ դեր ունեն երեխայի արժեհամակարգի ձևավորման վրա: Դրանք ունեն ճանաչողական մեծ նշանակություն: Էքսկուրսիաների միջոցով երեխաները ծանոթանում են հայրենիքին, ծննդավայրին, գեղագիտական արժեքներին, պատմական իրադարձություններին, բնական հարստություններին, բնության գողտրիկ վայրերին, հոգևոր կյանքի փաստերին:
- Կազմակերպված և անցկացված էքսկուրսիաները ինքնին ախտորոշման այնպիսի կախարդական միջոց են, որի օգնությամբ կարել է, շատ լավ դիտարկել և շտկել երեխաների վարքի խնդիրները, որոնք միշտ չէ, որ տեսանելի են սովորական պարապմունքների ժամանակ: Սա հիանալի միջոց է սաների դիտարկման և գնահատման մեթոդը կիրառելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ., Գ. Հակոբյան, Մանկավարժություն, Երևան, 2017
2. Կամենևա Լ.Ա. Մանկապարտեզում երեխաներին բնությանը ծանոթացնելու մեթոդները՝ Մ., 1995:
3. Կոնդրաշովա Մ.Ա. Նախադպրոցականների էկոլոգիական կրթությունը պարապմունքներին և առօրյա կյանքում, Մեթոդական ուղեցույց, 1991:
4. Մորոզովա Լարիսա, Ինչպես ճիշտ և հետաքրքիր անցկացնել էքսկուրսիան մանկապարտեզում https://mclkic.net/zanyatiya-s-detmi/konspekt-ckskursii-v-sredney-grupp.html
5. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014:
6. Սմբատյան Լ., Լ. Վերդյան, Հ. Մինասյան, Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր. Ծրագիր, Երևան, 2011: